ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » «_____» 2026թ. N -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 544-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 482-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 544-Ն որոշման 3-րդ կետում «հուլիսի 31-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 31-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N 544-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 459-Ն որոշման հավելվածի 36-րդ կետով Երևանի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերից և շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի, այդ թվում՝ բանկոմատների, վճարային տերմինալների կամ սառնարանների, սուրճի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների կամ այլ դիսպենսերների, սարքերի, սարքավորումների (այսուհետ՝ սարքավորում) տեղադրման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար սահմանվել է 40000 /քառասուն հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար տեղական վճարի դրույքաչափ:

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 482-Ն որոշման 1-ին կետի 20-րդ կետով Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերից և շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի, այդ թվում՝ բանկոմատների, վճարային տերմինալների կամ սառնարանների, սուրճի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների կամ այլ դիսպենսերների, սարքերի, սարքավորումների (այսուհետ՝ սարքավորում) տեղադրման թույլտվության համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվել են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝

ա. Արաբկիր վարչական շրջանի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 20000 /քսան հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

բ. Կենտրոն վարչական շրջանի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 26000 /քսանվեց հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

գ. Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքներում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 16000 /տասնվեց հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների համաձայն՝ տեղական վճարի արտոնություններ կարող են կիրառվել ավագանու որոշմամբ: Տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով արտոնությունները՝ ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին, իսկ 3-րդ մասի համաձայն՝ տեղական տուրքերի և (կամ) վճարների արտոնություններ են տեղական տուրքի և (կամ) վճարի դրույքաչափի նվազեցումը

ավագանու սահմանած տոկոսի չափով, տուրքի և (կամ) վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը կամ հաշվարկված տեղական տուրքի և (կամ) վճարի վճարումից ազատումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգանքը, որ շարժական ավտոմատ ինքնասպասարկող սարքերը, մասնավորապես՝ անիվների վրա գտնվող շարժական վճարային տերմինալներն աշխատում են ոչ ամբողջ օրը՝ միայն ցերեկային ժամերին, իսկ շենքերի, շինությունների արտաքին պատերի վրա ամրացվածները չափերով շատ ավելի փոքր են քան գետնին տեղադրվածները և ոչ այդքան տեսանելի են, ինչի արդյունքում դրանց աշխատանքային արդյունավետությունը մի քանի անգամ ցածր է գետնին տեղադրված՝ մշտական գործող վճարատերմինալային սարքերից, ինչպես նաև միջավայրում ունեն նվազագույն տեսողական ընկալում և չեն առաջացնում տեսողական մեծ աղմուկ՝ Երևան քաղաքի ավագանու կողմից 2026 թվականի ապրիլի 21-ի N 544-Ն որոշմամբ Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով ծառայություններ մատուցելու նպատակով շենքերի, շինությունների արտաքին պատերի վրա ամրացված և անիվների վրա գտնվող շարժական վճարային տերմինալների տեղադրման թույլտվության համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվել են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝

ա. Արաբկիր վարչական շրջանի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 10000 /տաս հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

բ. Կենտրոն վարչական շրջանի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 13000 /տասներեք հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

գ. Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքներում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 8000 /ութ հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար: Պիլոտային ծրագրով տեղական վճարի արտոնությունը կիրառվել է մինչև սույն թվականի հուլիսի 31-ը ներառյալ՝ արդյունավետությունը պարզելու նպատակով:

2026 թվականի հունիսի 1-ի դրությամբ տրամադրվել է 241 հատ պատերի վրա ամրացված և շարժական ավտոմատ ինքնասպասարկող սարքի տեղադրման թույլտվություն:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված տեղական վճարի արտոնությունը պիլոտային ծրագրով Է կիրառվել է մինչև 2026 թվականի հուլիսի 31-ը և գնահատելով դրա արդյունավետությունը՝ անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի N 544-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ տեղական վճարի արտոնության կիրառումը սահմանելով մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ